

նուազ, օտարագգիք, Յոյնք, Փռանկք եւ Ալամանք, հանդերձ ասպետօր երեցուն կարգացն (գորոց լիցին մեզ բանք յետ սակաւուց), որք յառաջագոյն կամ 'ի նմին Լեւոնէ ստացեալ կալուածս՝ գոգջիր եւ գնոյն պարտս լճութեան ունէին: Շատք 'ի լիճ պարոնայցս եւ բերդատեարց՝ բաց յիրաւանց խորհրդակցութեան Վերին ատենին՝ չունէին այլ ինչ մասն 'ի քաղաքական վարչութեան. այլ ոմանք կարգեալք էին 'ի վերայ մեծամեծ պաշտամանց եւ տեսչութեանց, վասն որոյ եւ նախապատիւք քան զայլսն համարեալք:– Իսկ ամենայն որ արտաքոյ ազատական տանցս՝ ժողովուրդն շինաբնակ՝ հպատակք համարէին թագաւորին կամ պարոնայցն՝ (յորոց վիճակս եւ բնակէին), եւ ոչ ունէին իրաւունս մտանել 'ի Վերին ատենն, բայց եթէ յազնուութիւն կամ 'ի պաշտամունս վերառեալ. ամենայն պէտք նոցին քաղաքականք եւ խնդիրք՝ քննէին եւ սահմանէին 'ի *Ստորին* կամ 'ի *Փոքր Ատենի* (Basse Cour), որոյ անդամք՝ 'ի նոցանէ ընտրեալք լինէին, եւ ըստ փռանկ բարբառոյ՝ կոչէին *Բուրճէպ* (Bourgeois). զայս դաս համարիմ ուրեք ուրեք *Փոքր մարդիկ* կոչեցեալ յարքունի պատմչէն. իսկ անմիջական երկրագործք եւ բնակք կալուածոց պարոնայցն՝ ըստ այնր ժամանակի օտարաց կոչման՝ *Պառիկոս* ('ի յունականէն առեալ, Παρικοί, Paricus) անուանէին: Եւ 'ի հասարակի՝ ամենայն՝ որոյ չգոյր ինչ ընդ այլում կապակցութիւն ծառայութեամբ կամ ստացուածով՝ կոչէր *Անլիճ*:

Գ. Յօրինուած եւ յանձանձանք թագաւորութեան Լեւոնի

Ըստ նորոց օրինացս եւ հրահանգաց քաղաքավարութեան, եւ ըստ նորոց դրակցաց եւ խնամեաց արեւմտեայց՝ յեղափոխեցան շատ կամ սակաւ՝ նախնի հայկական սովորոյթք, տարազք եւ պաշտամունք, եւ պատուոյ անուանքն. վասն որոց ասէր Լամբրունեցին¹⁰³. «Սա՝ Հայս՝ որ զգեստութն փռանկ է ձեւացեալ». եւ պարզագոյն եւս (որ եւ ճահագոյն մերոցս բանից), գրէր առ Լեւոն, 'ի նա ինքն կրթելով զյանդիմանութիւն սորա՝ որ վասն իւրոց ինչ կարծեցեալ նորաձեւութեանց. յոր՝ եթէ ոչ հաճիք, ասէ, ապա եւ դուք հետեւող լեալ հնացեալ հայրենի սովորութեանց, «Մի՛ կայք բացազլուիս՝ ըստ Լատինացոցն իշխանացն եւ թագաւորացն. այլ դիք շարփուշ՝ որպէս ձեր նախնիքն. աճեցուցէք զհերս

¹⁰³ Ի Մեկնութեան Պատարագի: